

IMPORTANT GATHERING ON STATUS OF CHURCHES IN THE HOLY LAND / INVITATION

Posted on March 20, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Յարգելի սրտցաւ հայրենակից,

Այսու կը տեղեկացնենք Ձեզի, որ յառաջիկայ Երեքշաբթի, Մարտ 22-ին, չափազանց կարեւոր եւ այժմեական հանդիպում մը կազմակերպուած է Պաղեստինցի յայտնի հայասեր մտաւորական, Պեթղեհեմի Dar al-Kalima համալսարանի հիմնադիր եւ Նախագահ, Լութերական եկեղեցւոյ Աւագ Հովիւ, համաշխարհայնօրէն ճանչցուած աստուածաբան եւ հասարակական գործիչ Վեր. Միթրի Ռահիպի հետ:

Մեծարգոյ հիւրը ԱՄՆ կը գտնուի քրիստոնէապատկան սրբավայրերու գծով բացատրասկան աշխատանքներ կատարելու նպատակով: Ան, իր գործընկերուհիին՝ [Դոկտ. Վարսէն Աղաբէկեան](#)ին հետ լրջօրէն կը զբաղի Երուսաղէմի հայապատկան կալուածներու պահպանման խնդրով: Կ'աւելցնենք նաեւ որ Աստուածաբան (University at Marburg, German) Վեր. Միթրի Ռահիպ յաճախ հարցազրոյցի հրաւիրուած է հերոսատեսային ընկերութիւններու եւ մամուլի ներկայացուցիչներու կողմէ (CNN, ABC, CBS, 60 Minutes, BBC, ARD, ZDF, DW, BR, Premiere, Raiuno, Stern, The Economist, Newsweek, Al-Jazeera, al-Mayadin, Vanity Fair):

Ձեր ներկայութիւնը խիստ փափաքելի է՝ նկատի առնելով որ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան «Կովերու պարտեզ» կոչուած հայապատկան կալուածի ապագան խիստ վտանգուած է:

Երեքշաբթի, 22 Մարտ, երեկոյեան ժամը 7:30-ին, ԹՄՄ Պէշկեօթիւրեան շէնքին մէջ:

Համեստ հիւրասիրութիւն:

1901, N. Allen Avenue
Altadena, CA 91001

Armenian Rights Council of America

Դոկտ. Վարսէն Աղաբէկեան հեղինակն է ["A Palestinian Armenian"](#) հատորին՝ ներկայացուած հանրայայտ հրապարակագիր ժիրայր Թիւթիւնճեանի կողմէ:

PETITION

Save the Lands

ՄՐՏԱԳԻՆ ԿՈՉ ԵՒ ԱՏՈՐԱԳՐԱՀԱԿԱՔ ՓՐԿԵՆՔ ՀԱՅԵՐԵՆԸ

Comments



KK - 2022-03-30 21:51:39

Հիմա ալ աղանդաւոր շարժումներով քարոզչութիւնը սկսաք: